ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 0925-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Սարգիս Փաշիկի Զարգարյանի (ծնված՝ 26.06 . 1974թ) դիմումը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Լեռնապատ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17.03.1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. ***որոշում եմ.***

1. Հաստատել Փամբակ համայնքի Լեռնապատ գյուղի 10-րդ փողոց, 50/4 հողամաս հասցեում գտնվող 06-041-0144-0004 կադաստրային ծածկագրով 0,02735 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Օրենքի ուժով ճանաչել Սարգիս Փաշիկի Զարգարյանի (ծնված՝ 26.06. 1974թ) սեփականության իրավունքը 06-041-0144-0004 կադաստրային ծածկագրով 0,02 հա և հատկացվածից ավել 0,00735 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

01 սեպտեմբերի 2025
գ. Փամբակ